ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/08/2025

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 14 փետրվարի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի փետրվարի 14-ին քննելով ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու անդամ Արմենակ Վարուժանի Միրզախանյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/08/2025 գործը՝

ՊԱՐԶԵՑ

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետով, իրականացրել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) 2023 թվականի տարեկան հաշվետվության (այսուհետ՝ Տարեկան հաշվետվություն) ներկայացման պահանջների

պահպանման և դրանում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգում, որի ընթացքում պարզվել է, որ Արմենակ Միրզախանյանը հաշվետու տարում Կուսակցությանը կատարել է 1,000,000 ՀՀ դրամի չափով նվիրատվություն:

1.2 Հանձնաժողովը հայտարարագրման էլեկտրոնային համակարգի ուսումնասիրությամբ պարզել է, որ Արմենակ Միրզախանյանը հանդիսանում է «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) իմաստով՝ հայտարարատու պաշտոնատար անձ և Հանձնաժողով է ներկայացրել 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագիր (այսուհետ՝ Հայտարարագիր):

1.3 Կուսակցությանը 1,000,000 (մեկ միլիոն) ՀՀ դրամի չափով կատարած նվիրատվության վերաբերյալ Տարեկան հաշվետվությամբ ներկայացված չափով նվիրատվություն կատարելու համար դրամական միջոցներ ունենալն Արմենակ Միրզախանյանի և նրա ընտանիքի անդամների օրինական եկամուտներով հիմնավորված լինելու հանգամանքը պարզելու համար Հանձնաժողովում ստուգվել են ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու անդամ Արմենակ Վարուժանի Միրզախանյանի և նրա ընտանիքի անդամների կողմից Հանձնաժողով ներկայացված՝ Հայտարարագրում 2023 թվականի տարեկան, ինչպես նաև պաշտոնատար անձի՝ պարտականությունների ստանձնման հայտարարագրերը հայտարարագրված համապատասխան տվյալները: Ստուգման արդյունքում պարզվել է, որ Կուսակցությանը նվիրատվություն կատարելը առերևույթ չի հիմնավորվում վերջինիս կողմից հայտարարագրված տվյալներով:

1.4 Հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 24-ի թիվ 01/2006-2024 գրությամբ Արմենակ Միրզախանյանից պահանջվել է Հանձնաժողովին ներկայացնել վերջինիս կողմից 2023 թվականի մարտի 24-ին Կուսակցությանը կատարած նվիրատվության՝ օրինական եկամուտներով հիմնավորված և արժանահավատ լինելը հավաստող փաստաթղթեր՝ այդ թվում իր՝ 2023 թվականի բանկային բոլոր հաշիվների քաղվածքները (բացառությամբ այն հաշիվների, որոնք հաշվետու տարում մուտքեր կամ ելքեր չեն ունեցել), ինչպես նաև ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ իր դիրքորոշումն արտահայտող տեղեկություններ (պարզաբանումներ):

1.5 2024 թվականի նոյեմբերի 22-ին Արմենակ Միրզախանյանը Հանձնաժողով է ներկայացրել «[redacted]» ՓԲ ընկերությունում առկա բանկային հաշվի 2023 թվականի հաշվետու տարվա քաղվածքը, որի համաձայն՝ վերջինս 2023 թվականի ընթացքում ստացել է հանրագումարային 2,000,000 ՀՀ դրամի չափով վարկ և 5,800,000 ՀՀ դրամի չափով գույքի օտարումից ստացված եկամուտ, որը, սակայն, Հայտարարագրի «Գ.1.1.Հաշվետու տարվա եկամուտներ» ենթաբաժնում չի հայտարարագրել:

1.6 Հանձնաժողովը պարզել է նաև, որ Արմենակ Միրզախանյանը 2023 թվականի պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրի՝ «Գ.1.2.Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ» ենթաբաժնում հայտարարագրել է 5,905,446 ՀՀ դրամի չափով վարկի մայր գումարի մնացորդ, իսկ Հայտարարագրի «Գ.1.2.Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» ենթաբաժնում հայտարարագրել է 4,533,000 ՀՀ դրամի չափով վարկի մայր գումարի մնացորդ: Հաշվի առնելով վարկերի մնացորդների վերաբերյալ վերոգրյալ տվյալները և այն հանգամանքը, որ ներկայացված քաղվածքի համաձայն 2023 թվականին հանրագումարային 2,000,000 ՀՀ դրամի չափով վարկը Արմենակ Վարուժանի Միրզախանյանը ստացել է պաշտոնեական պարտականություններն ստանձնելուց հետո՝ պարզ է դառնում, որ 2023 թվականի ընթացքում կատարել է Օրենքի 40.1-ին հոդվածի 3-րդ մասով սահմանված հայտարարագրման ենթակա ծախսի սահմանաչափը գերազանցող ծախս, որը Հայտարարագրի «Դ.5. Վարկի մարմանն ուղղված վճարումներ» ենթաբաժնում չի հայտարարագրել:

1.7 Հանձնաժողովը ձեռք բերված և ուսումնասիրված վերը նշված տվյալների հիման վրա արձանագրել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2024 թվականի նոյեմբերի 29-ին Արմենակ Վարուժանի Միրզախանյանին հասցեագրել է թիվ 01/3851-2024 ծանուցումը՝ այն ստանալուց հետո՝ 5-րդ աշխատանքային օրը՝ ժամը 11:00-ին հրավիրելով Հանձնաժողով՝ մասնակցելու վերոնշյալ առերևույթ իրավախախտման հիմքով վարչական իրավախախտման վերաբերյալ

արձանագրության կազմմանը: Նշված ծանուցումը 2024 թվականի դեկտեմբերի 9-ին հետ է վերադարձվել Հանձնաժողով՝ «Տեղափոխված» մակնշմամբ:

1.8 2024 թվականի դեկտեմբերի 18-ին Հանձնաժողովը վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը մասնակցելու վերաբերյալ թիվ 01/3851-2024 գրությունը տեղադրել է հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և միաժամանակ, նույն գրությունը թիվ 01/4244-2024 գրությամբ ուղարկել է ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավար Հովսեփ Առաքելյանին:

1.9 Ի պատասխան Հանձնաժողովի 2024 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 01/4244-2024 գրության՝ 2024 թվականի դեկտեմբերի 23-ին Հանձնաժողով է մուտքագրվել Սիսիան համայնքի ղեկավար Հովսեփ Առաքելյանի գրությունն առ այն, որ նշված գրությունը 2024 թվականի դեկտեմբերի 20-ին ստորագրությամբ հանձնվել է Արմենակ Միրզախանյանին:

1.10 2024 թվականի դեկտեմբերի 25-ին և 30-ին ներկայացրել է միջնորդություններ՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման օրը և ժամը տեղափոխելու և ներկայանալու պարտավորության օրը և ժամը սահմանել 2025 թվականի հունվարի 10-ին, ժամը՝ 16:00-ին սահմանելու վերաբերյալ:

1.11 Ի պատասխան Արմենակ Վարուժանի Միրզախանյանի 2024 թվականի դեկտեմբերի 25-ի և դեկտեմբերի 30-ի միջնորդությունների՝ Հանձնաժողովի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 01/4411-2024 գրությամբ Արմենակ Վարուժանի Միրզախանյանին է ուղարկվել 2025 թվականի հունվարի 10-ին ժամը՝ 16:00-ին նշանակված, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը մասնակցելու մասին ծանուցագիր:

1.12 2025 թվականի հունվարի 10-ին պատշաճ ծանուցված Արմենակ Վարուժանի Միրզախանյանի ներկայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 01/25 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշով: Վարչական իրավախախտման արձանագրության կազմման ընթացքում Արմենակ Վարուժանի Միրզախանյանը խնդրել է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օրը և ժամը նշանակել 2025 թվականի հունվարի 14-ին ժամը 14:00-ին:

1.13 2025 թվականի հունվարի 13-ին Արմենակ Վարուժանի Միրզախանյանը ներկայացրել է միջնորդություն՝ գործի քննությունը 2025 թվականի հունվարի 17-ին, ժամը 15:00-ին նշանակելու վերաբերյալ:

1.14 Ի պատասխան Արմենակ Վարուժանի Միրզախանյանի 2025 թվականի հունվարի 13-ի գրության Հանձնաժողովի կողմից 2025 թվականի հունվարի 13-ի գրությամբ Արմենակ Վարուժանի Միրզախանյանին է ուղարկվել 2025 թվականի հունվարի 17-ին ժամը՝ 15:00-ին նշանակված, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու մասին ծանուցագիր: Նշված գրությունը վերջինիս կողմից ստացվել է 2025 թվականի հունվարի 15-ին:

1.15 2025 թվականի հունվարի 17-ին Արմենակ Վարուժանի Միրզախանյանը ներկայացրել է գրություն, որով խնդրել է Հանձնաժողով ներկայանալու իր պարտավորությունը տեղափոխել մեկ այլ օր՝ պայմանավորված հարգելի հանգամանքով:

1.16 Ի պատասխան Արմենակ Վարուժանի Միրզախանյանի 2025 թվականի հունվարի 17-ի գրության Հանձնաժողովի կողմից 2025 թվականի հունվարի 20-ին Արմենակ Միրզախանյանին ներկայացվել է գրություն՝ 2025 թվականի հունվարի 24-ին ժամը՝ 16:00-ին նշանակված, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու մասին ծանուցագիր: Նշված ծանուցումը վերջինիս կողմից ստացվել է 2025 թվականի հունվարի 20-ին:

1.17 2025 թվականի հունվարի 24-ին Արմենակ Միրզախանյանը ներկայացրել է գրություն համաձայն, որի Հանձնաժողով ներկայանալու վերջինիս պարտավորությունը տեղափոխել մեկ այլ օր պատճառաբանելով վարույթի համար նշանակություն ունեցող փաստաթղթեր Հանձնաժողով ներկայացնելու համար:

1.18 Ի պատասխան Արմենակ Միրզախանյանի 2025 թվականի հունվարի 24-ի գրության Հանձնաժողովի կողմից 2025 թվականի հունվարի 24-ի գրությամբ Արմենակ Վարուժանի Միրզախանյանին է ուղարկվել 2025 թվականի հունվարի 31-ին ժամը՝ 17:00-ին նշանակված, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու մասին ծանուցագիր: Նշված ծանուցումը վերջինիս կողմից ստացվել է 2025 թվականի հունվարի 24-ին:

1.19 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Արմենակ Միրզախանյանի բացակայությամբ 2025 թվականի հունվարի 31-ին՝ ժամը՝ 17:00-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն, որի արդյունքում Հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի հիման վրա կասեցնելու մասին: Միաժամանակ, որոշվել է նշանակել գործի քննության նոր օր՝ 2025 թվականի փետրվարի 14-ին ժամը՝ 16:00-ին:

1.20 Հանձնաժողովի կողմից թիվ 01/632-2025 գրությամբ Արմենակ Վարուժանի Միրզախանյանին է ուղարկվել 2025 թվականի փետրվարի 14-ին ժամը՝ 16:00-ին նշանակված, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու մասին ծանուցագիր: Նշված ծանուցումը վերջինիս կողմից ստացվել է 2025 թվականի փետրվարի 13-ին՝ Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելով հաստատման փաստը:

1.21 2025 թվականի փետրվարի 14-ին՝ ժամը՝ 16:00-ին Արմենակի Միրզախանյանի ներկայությամբ տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

2.1 Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման ժամանակ Արմենակ Միրզախանյանը հայտնել է, որ վարկերի վերաբերյալ ոչ ամբողջական հայտարարագրված տվյալները սխալմունքի և հայտարարագրման տվյալներին ամբողջական չտիրապետելու հետևանք են, միաժամանակ պատրաստակամություն է հայտնել ներկայացնելու ուղղման դիմում՝ հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու նպատակով:

2.2 Արմենակ Միրզախանյանը նշել է նաև, որ բանկային հաշվի քաղվածքով նշված հանրագումարային՝ 5,800,000 ՀՀ դրամ գույքի օտարումից ստացված եկամուտը իր հաշվին է փոխանցել վերջինիս ընկերոջ որդին՝ Վաչե Գրիգորյանը, քանի որ Արմենակ

Միրզախանյանի ընկերը՝ Հովիկ Գրիգորյանն իր ամուսնալուծության գործընթացով պայմանավորված՝ վերջինիս պատկանող գույքերը (երեք միավոր հողամաս), մինչև պաշտոնի ստանձնումը, նվիրատվությամբ օտարել էր Արմենակ Միրզախանյանին: Միաժամանակ, Արմենակ Միրզախանյանը նշել է, որ հետագայում օրենքով սահմանված կարգով հնարավորություն չի ունեցել նշված գույքերը նվիրատվություն կատարել Հովիկ Գրիգորյանին, այդ իսկ պատճառով նշված գույքերը 5,800,000 ՀՀ դրամով օտարել է Հովիկ Գրիգորյանի որդուն՝ Վաչե Գրիգորյանին: Հետագայում, գործարքն անշարժ գույքի կադաստրում գրանցելուց հետո, նշված 5,800,000 ՀՀ դրամ գումարն ամբողջությամբ, կանխիկ եղանակով, վերադարձրել է Վաչե Գրիգորյանին:

2.3 2025 թվականի փետրվարի 14-ին, ժամը՝ 16:00-ին նշանակված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում Արմենակ Միրզախանյանը հայտնել է, որ 2023 թվականին համատեղ բնակվել է միայն իր կնոջ՝ Արաքսյա Բաղդասարյանի հետ: Իր դստեր՝ Անի Միրզախանյանի հետ համատեղ չի բնակվում 2020 թվականից, իսկ որդու՝ Վարուժան Միրզախանյանի հետ 2018 թվականից սկսած: Արմենակ Միրզախանյանը նշել է նաև, որ իր կողմից հայտարարագրված հողամասերի մշակման և գյուղատնտեսական աշխատանքների արդյունքում 2023 թվականի ընթացքում հանրագումարային ստացել է մոտ 6,000,000 ՀՀ դրամի չափով եկամուտ, որից շուրջ 4,000,000 ՀՀ դրամի չափով եկամուտը՝ կարտոֆիլի մշակման, իսկ շուրջ 2,000,000 ՀՀ դրամի չափով եկամուտը՝ ցորենի և հաճարի մշակման արդյունքում: Արմենակ Միրզախանյանը նշել է նաև, որ 2023 թվականի ընթացքում շուրջ 700,000 ՀՀ դրամի չափով եկամուտ է ստացել նաև իր որդու՝ Վարուժան Միրզախանյանի կողմից 2023 թվականի սեպտեմբերի 8-ին ձեռք բերված և վերջինիս պատկանող բեռնատար ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի շահագործման արդյունքում: Արմենակ Միրզախանյանը նշել է նաև, որ տեղյակ չի եղել հայտարարագրի լրացման կարգին և չի իմացել, որ այդ եկամուտների վերաբերյալ տվյալները պետք է լրացվեին Հայտարարագրում: Ինչ վերաբերվում է բանկային հաշվի քաղվածքով նշված, գույքի օտարումից ստացված, հանրագումարային 5,800,000 ՀՀ դրամ գումարին, ապա Արմենակ Միրզախանյանը հայտնել է, որ օտարված գույքը ի սկզբանե

իրեն չի պատկանել և ինքը գույքի օտարման արդյունքում ստացված ու կանխիկացված գումարը անմիջապես վերադարձրել է գումարն իրեն փոխանցած Վաչե Գրիգորյանին: Գործի քննության ընթացքում Արմենակ Միրզախանյանի կողմից ներկայացվել են նշվածը հիմնավորող փաստաթղթեր:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/08/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 Հայտարարագրում և ՀՀ ԿԸՀ պաշտոնական կայքում (https://www.elections.am/Elections/LocalProportional/27814) առկա տեղեկատվության համաձայն՝ Արմենակ Վարուժանի Միրզախանյան 2023 թվականի ապրիլի 12-ից մինչ օրս զբաղեցնում է ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու անդամի պաշտոնը:

3.2 Արմենակ Միրզախանյանը Հայտարարագրի «Գ.1.1.Հաշվետու տարվա եկամուտներ» ենթաբաժնում **որևէ տվյալ չի ներկայացրել**, մինչդեռ, ըստ վարույթի ընթացքում ձեռքբերված տվյալների՝ վերջինս **2023 թվականի ընթացքում, ստացել է հանրագումարային 2,000,000 ՀՀ դրամի չափով վարկ**, շուրջ **6,000,000 ՀՀ դրամի չափով գյուղատնտեսական գործունեությունից ստացված եկամուտ**, ինչպես նաև շուրջ **700,000 ՀՀ դրամի չափով իր որդուն՝ Վարուժան Միրզախանյանին պատկանող բեռնատար ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի շահագործումից ստացված եկամուտ:**

3.3 Ինչ վերաբերվում է Արմենակ Միրզախանյանի կողմից 5,800,000 ՀՀ դրամի չափով գույքի օտարումից ստացած գումարին, ապա նկատի ունենալով Արմենակ Միրզախանյանի ներկայացրած պարզաբանումը, ինչպես նաև դրա հիմնավորմանն ուղղված փաստաթղթերի ուսումնասիրությունը, առ այն, որ այդ գույքն ի սկզբանե իրեն չի պատկանել և այն, որ այդ գույքի օտարման արդյունքում ստացված ու կանխիկացված դրամական միջոցները նա անմիջապես վերադարձրել է գումարն իրեն փոխանցած Վաչե Գրիգորյանին,

Հանձնաժողովը գտնում է, որ նման պայմաններում նշված գումարը չի հանդիսացել Արմենակ Միրզախանյանի եկամուտը և ենթակա չէր հայտարարագրման համապատասխան բաժնում:

3.4 2023 թվականի պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրի՝ «Գ.1.2.Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ» ենթաբաժնում Արմենակ Վարուժանի Միրզախանյանը հայտարարագրել է 5,905,446 ՀՀ դրամի չափով վարկի մայր գումարի մնացորդ, իսկ Հայտարարագրի «Գ.1.2.Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» ենթաբաժնում ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ հայտարարագրել է 4,533,000 ՀՀ դրամ վարկի մայր գումարի մնացորդ:

Հաշվի առնելով վարկերի մնացորդների վերաբերյալ վերոգրյալ տվյալները և այն հանգամանքը, որ ներկայացված քաղվածքի համաձայն 2023 թվականին հանրագումարային 2,000,000 ՀՀ դրամի չափով վարկը Արմենակ Միրզախանյանը ստացել է պաշտոնեական պարտականություններն ստանձնելուց հետո, պարզ է դառնում, որ **վերջինս 2023 թվականի ընթացքում կատարել է Օրենքի 40.1-ին հոդվածի 3-րդ մասով սահմանված հայտարարագրման ենթակա ծախսի սահմանաչափը գերազանցող ծախս**, որը չի հայտարարագրել Հայտարարագրի «Դ.5. Վարկի մարմանն ուղղված վճարումներ» ենթաբաժնում:

Այսպիսով, Արմենակ Միրզախանյանի Հայտարարագրի «Գ.1. Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնում եկամուտների և «Դ. Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց ծախսեր» բաժնում ծախսերի վերաբերյալ տվյալներն ամբողջական հայտարարագրված չեն:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու անդամ Արմենակ Վարուժանի Միրզախանյանն Օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 40.1-ին հոդվածի (Ծախսերի հայտարարագրի բովանդակությունը սահմանող) 1-ին մասի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է սույն հոդվածով սահմանված ծախսերը:

4.3 Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով կատարված հետևյալ **ծախսերը՝** (...) *վարկի մարմանն ուղղված վճարումները,* (...):

4.4 Օրենքի 41-րդ հոդվածի (Եկամուտների հայտարարագրի բովանդակությունը սահմանող) 1-ին մասի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է սույն հոդվածով սահմանված եկամուտները և դրանց ստացման աղբյուրները:

4.5 Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված հետևյալ **եկամուտները՝** (...) *գույքը (նաև հայտարարագրման ոչ ենթակա) օտարելուց ստացված եկամուտը,* (...):

4.6 Օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ տարեկան հայտարարագիրը ներկայացվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից՝ տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար:

4.7 Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.8 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.9 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.10 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.11 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.12 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.13 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.14 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական

իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.15 Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշմամբ հայտարարագրերի լրացման կարգի խախտում են որակվում այն դեպքերը, երբ հայտարարագրման **ենթակա տվյալը** լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում, հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, Օրենքով պահանջվող ***հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:***

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների և կիրառելի իրավական նորմերի համադրությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ.

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու անդամ Արմենակ Վարուժանի Միրզախանյանը Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է ոչ ամբողջական տվյալներ, որի արդյունքում թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարք (հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը), մասնավորապես, Հայտարարագրի «Գ.1. Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտներ» բաժնի «Գ.1.1.Հաշվետու տարվա եկամուտներ» ենթաբաժնում որպես եկամուտ չի հայտարարագրել **2023 թվականի ընթացքում ստացած հանրագումարային 2,000,000 ՀՀ դրամի չափով վարկը**, շուրջ **6,000,000 ՀՀ դրամի չափով գյուղատնտեսական գործունեությունից ստացած եկամուտը**, ինչպես նաև շուրջ **700,000 ՀՀ դրամի չափով, իր որդուն՝ Վարուժան Միրզախանյանին պատկանող բեռնատար ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի շահագործումից ստացած եկամուտը:** Բացի այդ, Հայտարարագրի «Դ. Հայտարարատու

պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց ծախսեր» բաժնում Արմենակ Միրզախանյանը չի հայտարարագրել **Օրենքի 40.1-ին հոդվածի 3-րդ մասով սահմանված հայտարարագրման ենթակա ծախսի սահմանաչափը գերազանցող ծախսը՝** վարկերի մարմանն ուղղված վճարումները:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

Տվյալ պարագայում Հանձնաժողովն արձանագրում է, որ եկամուտների ոչ ամբողջական հայտարարագրման հետևանքով չեն բացահայտվել Արմենակ Միրզախանյանի կողմից չհայտարարագրված եկամուտների վերաբերյալ հայտարարագրման ենթակա մի շարք տվյալներ, մասնավորապես՝ նշված եկամուտների աղբյուրների, եկամուտ վճարող կազմակերպության կամ ֆիզիկական անձի, վերջինիս հասցեի, ինչպես նաև եկամուտների հայտարարագրմանն առնչվող օրենսդրությամբ սահմանված պարտադիր լրացման ենթակա այլ տվյալներ: Բացի այդ, եկամուտների ոչ ամբողջական հայտարարագրման արդյունքում հնարավոր չի եղել բացահայտել Արմենակ Միրզախանյանի կողմից 2023 թվականի ընթացքում կատարված ծախսերի, այդ թվում՝ Կուսակցությանը որպես նվիրատվություն փոխանցված գումարի օրինական եկամուտներով հիմնավորված և արժանահավատ լինելու հանգամանքը:

Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ ծախսերի ոչ ամբողջական հայտարարագրման հետևանքով չեն բացահայտվել նաև Արմենակ Միրզախանյանի կողմից չհայտարարագրված ծախսերի՝ վարկի մարմանն ուղղված վճարումների վերաբերյալ հայտարարագրման առնչվող օրենսդրությամբ սահմանված պարտադիր լրացման ենթակա մի շարք տվյալներ,

մասնավորապես՝ նշված ծախսի բովանդակությունը, ինչպես նաև ծախսի չափը (գումարը) և արժույթը: Հանձնաժողովն արձանագրում է, Օրենքի 40.1-ին հոդվածի (Ծախսերի հայտարարագրի բովանդակությունը սահմանող) 2-րդ մասով սահմանված իրավակարգավորումների համաձայն՝ հայտարարագրում պետք է ներառվեն հաշվետու տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով կատարված հետևյալ ծախսերը (...) ***վարկի մարմանն ուղղված վճարումները (...):*** Մինչդեռ, տվյալ պարագայում Հանձնաժողովն արձանագրում է, որ վարկի մարմանն ուղղված վճարումների վերաբերյալ տվյալները ոչ ամբողջական են ներկայացվել Արմենակ Միրզախանյանի ծախսերի Հայտարարագրում:

Այսպիսով, նշված տվյալների բացակայությունը հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմել հայտարարատու պաշտոնատար անձի գույքային դրության մասին:

Հաշվի առնելով այն, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (***փուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով***), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք, ինչպես նաև առկա չէ Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով, 244.17-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Արմենակ Վարուժանի Միրզախանյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ **200,000** (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական **900005001335** «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմենակ Վարուժանի Միրզախանյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Արմենակ Վարուժանի Միրզախանյանին տրամադրել եռօրյա ժամկետ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղումներ կատարելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ